ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա, 26
Հեռ. 52-08-94 ֆաքս

« 16 » « հոկտեմբերի » 2012թ.

ԳԿ- 804

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
իրավաբան պարոն Գևորգ Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան,

Ի պատասխան Ձեր 05.10.2012թ. թիվ 182-ի 7 գրության, տեղեկացնում ենք, որ ՀՀ նախագահի պաշտոնական հանդիպումների ժամանակ տրվող հյուրասիրություններն իրականացվում են տարբեր մասնագիտացված կազմակերպությունների կողմից: Վերջին տարիներին մասնագիտական ծառայություններ մատուցած բազմաթիվ այդպիսի կազմակերպությունների շարքում են «Արտեքսիմ», «Ջիվանյան ընդ Սան», «Դոլմամա», «Թուֆենկյան Հոսփիթալիթի» ընկերությունները:

ՀՀ նախագահի պաշտոնական հանդիպումների ժամանակ տրվող հյուրասիրությունների ծախսերը դասակարգվում են որպես ներկայացուցչական ծախսեր, և հիշյալ ծառայությունների գնումն իրականացվում է բանակցային ընթացակարգով՝ առանց հայտարարությունը նախապես հրապարակելու՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման 32-րդ կետի 4-րդ ենթակետը: Յուրաքանչյուր միջոցառման համար տվյալ կազմակերպության հետ կնքվում է մեկանգամյա պայմանագիր, որը գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների կատարման ավարտը:

2012թ. ՀՀ պետական բյուջեի «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական հոդվածով, համաձայն ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1919-Ն որոշման հավելված 12-ի՝ «Խորհրդակցությունների (վեհաժողովների) կազմակերպման ծառայություններ» տողով ՀՀ նախագահի աշխատակազմին հատկացվել է 225,940.0 հազար դրամ, որից կատարվում են ՀՀ նախագահի պաշտոնական հանդիպումների ժամանակ տրվող հյուրասիրությունների համար ծախսերը:

2012թ. ինը ամսվա կտրվածքով ՀՀ պետական բյուջեով նախատեսված գումարից ՀՀ նախագահի աշխատակազմը հյուրասիրությունների՝ պետական տոների, այդ թվում՝ Անկախության տոնի առթիվ 1500-ից ավելի հյուրերի ընդունելության, պետական պարգևների, Նախագահի մրցանակների արժանացած անձանց մեծարման արարողությունների, արտասահմանյան բարձրաստիճան հյուրերի պաշտոնական ընդունելությունների համար ծախսել է 33.563.7 հազար դրամ:

Նախագահի աշխատակազմը, պայմանագրի համաձայն, վճարում է հյուրասիրությունների համար ծախսված ընդհանուր գումարը, որը ներառում է և՛ ուտեստների, և՛ խմիչքների համար տվյալ կազմակերպությունների կողմից ներկայացված ծախսը:

Հարգանքով՝

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ